ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Օտար լեզվի ուսուցման մեթոդները

Առարկա՝ Անգլերեն

Հեղինակ՝ Ա. Ղազարյան

Ղեկավար՝ Ա. Խոսրովյան

Երևան 2023

Բովանդակություն

- Ներածություն ---------- 3
- Նորագույն մեթոդների ընտրությունն ու կիրառումը անգլերենի ուսուցման գործընթացում ---------- 4
- Օտար լեզվի ուսուցման արդի մեթոդներն ու հնարները ---------- 5
- Ինտերակտիվ մեթոդներ (Համագործակցային ուսուցում)---------- 10
- Ինտերակտիվ ուսուցմամբ դասի պլանի օրինակ----------15
- Եզրակացություն---------- 17
- Օգտագործված գրականություն---------- 18

Ներածություն

Ի՞նչ: Ինչու՞: Ինչպե՞ս: Յուրաքանչյուր ուսուցիչ դասարան մտնելուց առաջ ինքն իրեն պետք է տա այս հարցերը: Ո՞րն է կրթության նպատակը, ի՞նչ պետք է սովորեցնի նա աշակերտին:
«Ուսուցման մեթոդ» հասկացությունն իր մեջ ներառում է երեք խնդիր՝ ի՞նչ սովորեցնել, ինչի՞ համար սովորեցնել, ինչպե՞ս սովորեցնել:

Ուսուցման մեթոդը մանկավարժական գործունեության հիմնական գործիքն է, որով իրականացվում է ուսուցչի և աշակերտի համագործակցությունը՝ ուղղված ուսումնառության նախանշված արդյունքին:

Մեթոդական բազմաթիվ նորարարություններ այսօր կապվում են ուսուցման փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդների կիրառման հետ: Ինտերակտիվ նշանակում է փոխանցել կամ զրույցի, երկխոսության մեջ գտնվել դիմացինի հետ: Ինտերակտիվ ուսուցումը առաջին հերթին ուսուցում է երկխոսության միջոցով: Այն ուսուցողական տեխնոլոգիա է՝ հիմնված խմբի անդամների փոխազդեցության և ուսումնառության խնդիրների լուծման, սովորողի ազատության վրա:

Սույն հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել մեթոդներ և հնարներ, որոնց կիրառելու դեպքում ուսուցիչը կհասնի իր առջև դրված նպատակների վերջնարդյունքներին:

❖ Նորագույն մեթոդների ընտրությունն ու կիրառումը անգլերենի ուսուցման գործընթացում

Մեթոդը հանդիսանում է ուսումնառության միջուկը և ուսուցման նախապես պլանավորած նպատակը կապում է վերջնական արդյունքի հետ: Ուսուցման մեթոդ հասկացությունն իր մեջ ներառում է երեք խնդիր՝ ի՞նչ սովորեցնել, ինչու՞ սովորեցնել և ինչպե՞ս սովորեցնել: Կրթության բովանդակությունը (ի՞նչ սովորեցնել) և կրթության նպատակները (ինչու՞ սովորեցնել) իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարներ: Կան մի շարք գործոններ, որոնք ազդում են մեթոդների ընտրության վրա: Դրանցից են՝

ա. Ուսուցման նպատակներն ու բովանդակությունը

բ. Ուսումնական նյութի քանակն ու բարդությունը

գ. Աշակերտների պատրաստվածության մակարակը

դ. Տարիքային և անհատական առանձնահատկությունները

ե. Ուսուցման կազմակերպման պայմանները

զ. Ուսուցչի պատրաստվածության մակարդակը

Հմուտ ուսուցիչը, մեթոդն ընտրելիս, պետք է հաշվի առնի վերոնշյալ գործոնները և հստակ պատկերացում ունենա դասի որ փուլում է անհրաժեշտ կիրառել այս կամ այն մեթոդը: ՈՒսումնական գործընթացն արդյունավետ ծրագրելու և դասապլանը մշակելու համար ուսուցիչը պետք է առաջնորդվի «5 E» մոդելով, որը կոչվում է յուրացման շրջան: Այն բաղկացած է 5 տարրերից, որոնք անգլերենում սկսվում են «E» տառով՝

1.Ներգրավում (Engagement)

2. Հետազոտում (Exploration)

3. Ներմուծում (Explanation)

4. Մշակում (Elaboration)

5.Արժևորում (Evaluation)

Յուրացման շրջանն իրենից ներկայացնում է դասի առաձգական պլանավորման մոդել: ՈՒսուցիչը հստակ պետք է իմանա, թե յուրացման շրջանի որ փուլում կարելի է կիրառել այս կամ այն մեթոդը:

❖ Օտար լեզվի ուսուցման արդի մեթոդներն ու հնարները

Մտագրոհ մեթոդը դասի սկիզբն ապահովող լավագույն մեթոդներից է: Մտագրոհի միջոցով ուսուցիչը դասարանից մտքեր է հավաքում տվյալ թեմայի վերաբերյալ: Ընդ որում մտագրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը: Այն կարելի է կիրառել դասի ներգրավման փուլում՝դասի սկզբում, որը՝

- նախապատրաստում է սովորողներին նոր դասի ընկալմանը, դա կարելի է անել նախորդ դասի հարցման, ամփոփման միջոցով, հատկապես երբ նոր դասը հնի շարունակությունն է
- բացահայտում է նոր նյութի վերաբերյալ սովորողների գիտելիքները
- ակտիվացնում է աշակերտներին՝ ներգրավելով նրանց քննարկվելիք նյութի մեջ

Ներմուծվող նոր թեման գրվում է գրատախտակին և առաջարկվում է աշակերտներին տվյալ գաղափարի հետ ասոցացվող բառեր գրել: Օրինակ՝ 9-րդ դասարանում «արվեստ» թեման ներմուծելիս ուսուցիչը հարցնում է, թե աշակերտներն ինչ բառեր գիտեն տվյալ թեմայի վերաբերյալ:



Այս մեթոդի գաղափարը կայանում է աշակերտների արդեն իսկ ձեռք բերած գիտելիքներն ու փորձառություններն ակտիվացնելու, երևան հանելու և նոր յուրացվելիք նյութին կապելու մեջ:

Մեկ այլ արդյունավետ և ակտիվ մեթոդ է **պրիզման**: Այն խրախուսում է աշակերտների ազատ և անկաշկանդ մտածողությունը և նրա ընթացքը դարձնում է ակնառու և պատկերավոր: Այս մեթոդը կարելի է կիրառել անհատապես և խմբային: Այն շատ ժամանակ չի խլում և անցնում է շատ աշխույժ: ՈՒսուցիչը գրում է մեկնաբառը՝ այն հիմնական հասկացությունը, որն ուսումնասիրվելու է:

Սխեմայի հաջորդ վանդակներում առանց քննարկման գրանցվում են մեկնաբառի ազդեցությամբ մտքում ծագած երկու պատահական բառեր: Ուսուցիչը միայն հետևում է, որ խրախուսվեն ասոցիատիվ կապերը: Երեք շերտով բացվող պրիզման փակվում է վերջնաբառով, որը, որպես կանոն, մեկնաբառի հետ գտնվում է տրամաբանական կապի մեջ:



Գոյություն ունի պրիզմայի մեկ այլ տարբերակ, երբ տրվում է և՛ մեկնաբառը, և՛ վերջնաբառը: Այս դեպքում աշակերտները բառերը գրում են տրամաբանական կապով: Պրիզմայի այս տեսակը կիրառվում է դասի վերջում՝ամրապնդման փուլում:

<u>**ԳՈԻՍ**</u> (**Գ**իտեմ-**ՈՒ**զում եմ իմանալ-**Ս**ովորեցի) ԳՈԻՍ մեթոդը երեք սյունակից բաղկացած աղյուսակ է, որը կարելի է գծել ինչպես գրատախտակին, այնպես էլ ցուցադրել պաստառի վրա: Այս մեթոդը կարելի է լայնորեն օգտագործել ընթերցանության ժամանակ որպես ուղեցույց աշակերտների համար:





Աղյուսակի վերևում գրվում է տեքստի վերնագիրը կամ դասի թեման: Աշակերտներին հարց է տրվում, թե ինչ գիտեն տվյալ թեմայի վերաբերյալ: Պատասխանները գրանցում ենք «գիտեմ» սյունակում: Երկրորդ սյունակում գրանցում ենք այն հարցերը, որոնց պատասխանն ուզում ենք իմանալ:Այնուհետև առաջարկում ենք կարդալ տեքստն ու գտնել այն մասերը, որոնք պատասխանում են իրենց հարցերին: Երրորդ սյունակում թվարկում են այն տեղեկությունները, որոնք հայտնաբերել են կարդալու ընթացքում: Ուսուցիչը գրի է առնում պատասխանները վերջին երրորդ սյունակում: Այս մեթոդը ուսուցչին թույլ է տալիս պատկերացում կազմել տվյալ թեմայի վերաբերյալ աշակերտների նախնական գիտելիքի մասին: Զարգացնում է աշակերտների հարցադրման, ինքնավերլուծության և հարցախույզ ընթերցանական հմտությունները:

<u>T-աձև աղյուսակ</u> մեթոդը օգտագործվում է միևնույն խնդրի երկու կողմերը համեմատելու համար: Այն կազմված է երկու բաժնից, որտեղ գրանցվում են միևնույն հասկացության կամ խնդրի հակադիր կողմերը, դրական կամ բացասական որակները:

True	False

Այս մեթոդը կարելի է կիրառել երկու տարբեր պատասխանների (այո/ոչ, կողմ/դեմ, ճիշտ է/սխալ է) գրառման համար:

Որևէ պատմական կամ գրական հերոսի դրական և բացասական կողմերը բնութագրելիս կարելի է կիրառել T-աձև աղյուսակի մեթոդը: Հոդի ուսուցման ժամանակ

աշակերտներին կարելի է առաջարկել տեքստից դուրս գրել a/the հոդով բառեր T-աձև աղյուսակի «գիտեմ», «չգիտեմ» բաժիններում:

<u>Վեննի դիագրամ</u> մեթոդն իրենից ներկայացնում է երկու կամ ավելի շրջանաձև պատկերներ, որոնք կենտրոնական մասում ունեն հատման մեծ մակերես: Ի տարբերություն T-աձև աղյուսակի, այս դիագրամն օգտագործվում է երկու կամ ավելի գաղափարներ միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունները ցույց տալու համար:

Օրինակ՝ ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին համադրել խնձոր և նարինջ մրգերը, գտնել նրանց ընդհանրություններն ու տարբերությունները:



Նորագույն մեթոդների շարքում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում **<u>դերախաղերը</u>** (Role Play): ՈՒսուցչից պահանջվում է ստեղծագործակցական մոտեցում և դասարանում բարենպաստ միջավայր ստեղծելու հմտություն: Դերախաղերը գրավում են աշակերտներին և խթանում նրանց հետաքրքրությունն ու պատասխանատվությունը: Դերախաղի մի տեսակ է ***<u>մնջախաղը</u>***, որն օգնում է հանգստանալ և միաժամանակ սովորել: Դասարանը բաժանվում է երկու խմբի: Յուրաքանչյուրը գաղտնի որևէ գաղափար է որոշում: Բառն ասվում է մյուս թիմից միայն մեկին, ով առանց լեզվական միջոցներ օգտագործելու, մնջախաղով ներկայացնում է տվյալ գաղափարը: Ճիշտ կռահող խումբը հաղթում է: Մեկ այլ դերախաքի տեսակ է ***<u>«հրաշագործը»</u>***, որը կարելի է կիրառել գոյականի հոգնակի թվի ամրապնդման փուլում: Աշակերտները

թվարկում են եզակի թվով գոյականներ, իսկ «հրաշագործը» դրանք դարձնում է հոգնակի: Եթե նա սխալվում է, ապա կորցնում է իր կախարդական ուժը և այն անցնում է մեկ այլ աշակերտի, ով դառնում է «հրաշագործ»:

Շատ հետաքրքիր խաղ է «***չորս տուփը***»: Սա խմբային խաղ է, որն իր մեջ ներառում է դերախաղի տարր: ՈՒսուցչի սեղանին դրվում են չորս տարբեր գույնի տուփեր՝ հոգնակի թվի կազմության տարբեր կանոններով ներկայացված: Օրինակ՝ դեղին տուփը «-s» վերջավորության, կարմիրը հոգնակի թվի «-es» վերջավորության, կանաչը «անկանոն» հոգնակի թվի կազմության, իսկ կապույտը՝«y» տառով վերջացող գոյականների համար: Դասարանը բաժանվում է խմբերի: Համարակալած թղթերի վրա գրել գոյականներ և բաժանել երեխաներին: Մեկին ընտրել որպես «գանձապահ» և հրավիրել տուփերի մոտ: Յուրաքանչյուր խմբի ղեկավարը մոտենում է և տուփերի մեջ է գցում արդեն խմբավորած բառերը համապատասխան կազմության կանոնների: Խաղի ավարտին «գանձապահը» հաշվում է և ստուգում տուփերի բառերը: Հաղթում է ամենաշատը ճիշտ թվով բառեր հավաքած թիմը:

Դերախաղերն ունեն մի շարք առավելություններ: Դրանցից են՝

ա. զարգացնում են աշակերտների միջանձնային հաղորդակցական հմտությունները

բ. օգնում են գնահատել դիմացինի տեսակետը, ճանաչել և ընդունել դրանք

գ. օգնում են սովորել լեզվական նյութը՝ իրենց պատկերացնելով այդ դերերում

դ. Զարգացնում են աշակերտների հաղորդակցական ունակությունները: Նրանք ուսումնասիրում են ժամանակներ, վայրեր, իրադրություններ, որոնց հետ ուղղակիորեն չեն առնչվել:

<u>ՈՒսուցողական ֆիլմերի դիտում</u>

Ուսուցողական վիդիո ֆիլմերը կարելի է կիրառել համապատասխան թեմայի ուսուցման ժամանակ: Ֆիլմի դիտումից առաջ դասախոսը պետք է ուսանողներին առաջադրի մի քանի հիմնական հարց, որոնք հիմք կծառայեն հետագա քննարկմանը: Կարելի է ֆիլմը կանգնեցնել նախապես որոշված պահերին եւ կազմակերպել քննարկում: Դասի վերջում ամփոփել եւ բարձրաձայնել եզրակացությունները:

« Կլոր սեղան»

Մեթոդը կիրառվում է որպես որեւ է հարցի քննարկման միջոց: «Կլոր սեղան» մեթոդի հիմնական մասը կազմում է դիսկուսիան կոլլեկտիվ քննարկվում է որևէ հարց, համեմատվում կարծիքներ: Մասնակիցները կարող են լրացնել միմյանց կամ հակասել մեկը մյուսին:

Մեթոդի առանձնահատկություններն են՝

1. Բոլոր մասնակիցները պետք է կարծիք հայտնեն եւ ձգտեն, որ իրենց հասկանան:
2. Բոլոր մասնակիցները հավասարազոր են, ոչ ոք իրավունք չունի թելադրել իր կամքը եւ կարծիքը :
3. «Կլոր սեղանի» առանձնահատկությունը այն է, որ այն պետք է իրոք կլոր լինի, այսինքն մասնակիցների շփումը պետք է լինի «աչք աչքի» ինչը բերում է ակտիվության մեծացմանը:
   Մեթոդը թույլ է տալիս ամրապնդել ավելի վաղ ձեռք բերված գիտելիքները եւ լրացնել բաց թողնված տեղեկատվությունը: Գիտելիքների փոխանակման հետ մեկ տեղ ուսանողները սովորում են արտահայտել իրենց մտքերը, գաղափարները: Սովորում են հիմնավորել եւ պաշտպանել համոզմունքները:

❖ Ուսուցման ինտերակտիվ մեթոդներ

ՈՒսուցման պրոցեսում տարբերում են դասավանդման պասիվ, ակտիվ եւ ինտերակտիվ մեթոդներ:

Պասիվ մեթոդ -Այս դեպքում ուսուցիչը հիմնական գործող անձն է, որը ղեկավարում է դասընթացը, իսկ աշակերտները պասիվ լսողներ են: ՈՒսուցիչ աշակերտ կապը իրականացվում է հարցումների, թեստերի, ստուգողական աշխատանքների միջոցով: *Այս մեթոդը քիչ էֆեկտիվ է*: Դրա առավելությունը միայն սահմանափակ ժամանակում նյութի մեծ ծավալի մատուցումն է:

աշակերտ



Ակտիվ մեթոդները հիմնված են ուսուցիչ աշակերտ համագործակցության վրա, այսինքն ուսուցիչը եւ աշակերտը հավասարապես մասնակցում են ուսումնական պրոցեսին: *Աշակերտները պասիվ լսողներ չեն, այլ ակտիվ մասնակիցներ:* Ակտիվ մեթոդների նպատակն է՝ խոսքի, հիշողություն, երևակայություն օգտագործումը գիտելիքների, հմտությունների յուրացման համար:



Ինտերակտիվ ուսուցումը երկխոսությամբ ուսուցում է, որի ընթացքում աշակերտները համագործակցում են ոչ միայն ուսուցչի, այլև միմյանց հետ: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ ուսուցիչը նոր գիտելիքներ փնտրելու իր հանձնարարություններով մասնակիցներին ուղղորդում է անկախ հետազոտությունների կատարմանը:



ՈՒսացչի գործառույթներն են՝

- Բացատրել սպասվելիք աշխատանքի նպատակը: Դասի սկզբում հայտարարել թեման եւ քննարկվող հարցերը:

- Բաժանել ուսանողներին խմբերի եւ տալ հանձնարարություններ:
- Չթողնել առանց ուշադրության սխալ մեկնաբանությունները, սակայն միեւնույն ժամանակ միանգամից չտալ ճիշտ պատասխանը:
- Հետեւել, որ քննադատվի միտքը, կարծիքը, այլ ոչ թե միտքը արտահայտող աշակերտը:

Վերջին ժամանակներում մանկավարժական գրականության մեջ շատ է խոսվում ինտերակտիվ/համագործակցային մեթոդների արդյունավետ կիրառման մասին: Ինտերակտիվ տերմինը կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ. Անգլերեն «inter»- փոխադարձ, «act»- գործողություն: Ինտերակտիվ նշանակում է փոխանցել կամ զրույցի, երկխոսության մեջ գտնվել: Այսպիսով՝ ինտերակտիվ ուսուցումն առաջին հերթին ուսուցում է երկխոսության միջոցով: Այն ուսուցողական տեխնոլոգիա է՝ հիմնված խմբի անդամների փոխազդեցության և ուսումնառության խնդիրների լուծման,սովորողի ազատության վրա: Չկան ինտերակտիվ մեթոդների արդյունավետ կիրառման բանաձևեր: Ցանկացած դասարան, դասապրոցես եզակի է, անկրկնելի: ՈՒսուցչի խնդիրն է ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել եզակի իրավիճակին: ՈՒսուցիչն ազատ է մեթոդների ընտրության հարցում: Բայց այդ ընտրությունը չի կարող կամայական բնույթ կրել, քանի որ *մեթոդի կիրառման բուն նպատակը ուսուցման նպատակների իրականացմանը հասնելն է*: Այլ կերպ ասած՝ պետք է ոչ թե «տեխնիկա ցուցադրել», այլ հասնել դասի՝ նախապես սահմանած նպատակի վերջնարդյունքին: ՈՒսուցման պրոցեսը, պետք է հետաքրքիր լինի: Նման դասընթացը պահանջում է ավելի մեծ պատրաստվածություն: Բավարար չէ միայն բովանդակության մատչելի հասանելի ներկայացումը: Անհրաժեշտ է, որ ուսուցիչը կիրառի մեթոդներ, որոնց շնորհիվ աշակերտը կամա թե ակամա դառնում է դասապրոցեսի մասնակից: Հետազոտությունները ցույց են տվել, որ՝

Երբ դուք ինչ-որ բան կարդում եք՝ հիշում եք 10%

Երբ դուք ինչ-որ բան լսում եք՝ հիշում եք 20%

Երբ դուք ինչ-որ բան տեսնում եք՝ հիշում եք 30%

Երբ դուք ինչ-որ բան տեսնում եւ լսում եք հիշում եք 50%

Երբ դուք ինչ-որ բան ինքնուրույն եք անում՝ հիշում եք 90%-ը:

Համագործակցային ուսուցման ժամանակ սովորողները, համագործակցելով փոքր խմբերով, ձևավորում են ընդհանուր հասկացություններ և հմտություններ: Աշակերտները համագործակցային միջավայրում են կառուցում իրենց հմտությունները՝ խոսելու, բանակցելու, վիճարկելու և հարցեր տալու միջոցով: Համագործակցային ուսուցումն իրականանում է համագործակցային դասի միջոցով: Համագործակցային դասը մի գործընթաց է, որը հիմնականում կազմված է տրամաբանորեն միմյանց հաջորդող վարժություններից: Դրանց կատարման ընթացքում միասին փորձարկելով/կիրառելով սոցիալական, ինքնաճանաչման և մտածողության հնարներ՝ սովորողները կառուցում են նոր գիտելիքներ և ձեռք են բերում ու զարգացնում նոր հմտություններ:

Ինչ պետք է անի ուսուցիչը համագործակցային ուսուցում կազմակերպելու համար

Անհրաժեշտ է դասագրքի նյութը, դասապլանները, դասապրոցեսը, առաջադրանքները կառուցել այնպես, որ սովորողները համագործակցելու կարիք ունենան: Ուսումնական նյութը, ուսուցման մեթոդները համապատասխանեցնել կոնկրետ առարկայի, կոնկրետ դասարանի կարիքներին:

Հաշվի առնել այն խնդիրները, որ կարող են առաջանալ առանձին աշակերտների մոտ, փորձելով միջամտել, կանխել հնարավոր ձախողումները, կոնֆլիկտները: Խմբային աշխատանքի պարագայում պետք է հաշվի առնել ինչպես ամբողջ խմբի աշխատանքի արդյունքը, այնպես էլ խմբի յուրաքանչյուր անդամի ներդրումը: Համագործակցային ուսուցման կարևոր միջոց է խմբային աշխատանքը: Համագործակցային խմբի աշակերտները պետք է հասկանան, որ իրենց հաջողությունը կախված է խմբի բոլոր անդամների ներդրումից: Նման խմբերին պետք է բնորոշ լինի թիմային աշխատանքի ոգին, ընդհանուր նպատակին հասնելու համար առավելագույնը անելու ցանկությունը, արդյունավետ փոխկապակվածությունն ու փոխկախվածությունը, սոցիալական փոխազդեցության հմտությունները, խմբային աշխատանքի ընթացքը և արդյունքը մշտապես գնահատելու և վերանայելու կարողությունը:

Փոքր խմբերով աշխատանքի նկարագրությունը և նպատակը

Աշխատանքը փոքր խմբերում ուսուցման կազմակերպման ձև է, որը սովորողներին հնարավորություն է տալիս փոխանակել իրենց գիտելիքներն ու փորձը դասընկերների հետ, համատեղ խնդիրներ լուծել: Փոքր խմբերով աշխատանքն էապես մեծացնում է աշակերտների ակտիվությունը դասապրոցեսում: Աշակերտն ավելի լավ է սովորում, երբ ակտիվ մասնակցում է ուսուցման գործընթացին: Փոքր խմբերով ուսուցումն ունի հետևյալ նպատակները՝

- զարգացնում է տարբեր բնույթի խնդիրներ լուծելու կարողություն,
- ձևավորում է հաղորդակցման հմտություն,
- աշակերտները սովորում են միմյանցից,
- զարգացնում է աշակերտների պատասխանատվության զգացումը, միմյանց հաշվետու լինելու հատկությունը՝ խմբի ընդհանուր հաջողությունն ապահովելու հարցում,
- խթանում է թիմային աշխատանքը,
- ապահով և նպաստավոր միջավայր է ստեղծում գիտելիքներն ու հմտությունները դրսևորելու համար,
- քննարկումների միջոցով ամրապնդում է աշակերտների համոզմունքները,
- ընձեռում է ակտիվ մասնակցություն և ինքնադրսևորման հնարավորություն:

Փոքր խմբի չափը կարող է տատանվել 3-7 -ի միջև: Առավել արդյունավետ են համարվում չորս հոգուց բաղկացած խմբերը: Այդպիսի խմբերում աշակերտները առավել մեծ ակտիվություն դրսևորելու հնարավորություն ունեն: Ըստ էության, չորս հոգանոց խմբերում կարևորվում է յուրաքանչյուր աշակերտի անհատական պատասխանատվությունը, և միաժամանակ ձևավորում է կոլեկտիվ աշխատանքի մթնոլորտ:

Խմբի մեծությունը կախված է դասի նպատակից և ընտրված մեթոդից:

Խմբային աշխատանքի ընթացքը

1. Դասարանը բաժանել 3-7 հոգանոց խմբերի:
2. Հանգմանալից ներկայացնել առաջադրանքը:
3. Հանձնարարել խմբին կատարելու աշխատանքի բաժանում՝ ընտրել ներխմբային քննարկումները վարողին, դրանք գրանցողին:

4. Յուրաքանչյուր խմբին տալ հնարավորություն ամփոփիչ ձևով ներկայացնելու քննարկումների արդյունքները: Արդյունքները սովորաբար ներկայացնում է խմբի խոսնակը: Բայց կարող են ներկայացնել նաև խմբի մի քանի անդամներ կամ ամբողջ խումբը:
5. Փորձել ընդհանրություններ գտնել խմբի տեսակետների միջև:
6. Աշակերտների հետ ամփոփել, թե ինչ սովորեցին և ինչպես կօգտագործեն իրենց սովորածը:

Այսպիսով, համագործակցային ուսուցում ճիշտ կազմակերպելու համար

- Առաջադրանքը պետք է հստակ և պարզ ներկայացնել:
- Խումբը պետք է տեղեկացված լինի ժամանակի սահմանափակումներին:
- Խմբի և դասարանի աշակերտները պետք է միմյանց լսեն, եթե նույնիսկ համաձայն չեն իրար հետ:
- Խմբային քննարկումների ժամանակ ոչ ոք չպետք է իշխի մյուսների նկատմամբ:
- Խրախուսել մասնակցությունն ու հարցերը:
- Քննադատել կատարումը և ոչ թե անձին:

Ահա ինտերակտիվ ուսուցմամբ դասի պլանի օրինակ.

Առարկա՝ Անգլերեն (G. Gasparyan, N. Hovhannisyan, H. Kajberuny)

Աշակերտների թվաքանակը՝ 15

Տևողությունը՝ 90 րոպե

Դասարան՝ 8-րդ

Թեմա- Unit 1. Travelling to Britain

Դասի պլանը հաջորդական քայլերով:

Դասի նպատակները՝

ա) սովորել արտահայտել մտքերը թեմայի շուրջ,

բ) օգտագործել թեմայի բառապաշարը քննարկման մեջ,գ)

ստանալ նոր տեղեկություններ թեմայի շուրջ,

դ) ամփոփել ստացած գիտելիքները:

Դասի վերջնարդյունքը.

ա) կարողանալ օգտագործել թեմային վերաբերվող բառերն ու արտահայտությունները քննարկման մեջ,

բ) արտահայտել մտքերը թեմայի շուրջ,

գ)կիսել թեմայի շուրջ ձեռք բերած փորձն ու գիտելիքներ ըհամադասարանցիների հետ:

Անհրաժեշտ պարագաներ՝

պրոյեկտոր, համակարգիչ, պաստառներ, քարտեր, մարկերներ:

Դասը սկսել <<Մտագրոհ (Brainstorming)>>մեթոդով «Բրիտանիա» բառի շուրջ:

Այս մեթոդը օգնում է ուսուցչին ակտիվացնել աշակերտներին, պարզել, թե ինչ գիտեն աշակերտները նյութի մասին: Աշակերտները հաղորդում են ընդհանուր տվյալներ Մեծ Բրիտանիայի մասին:

Իմաստի ընկալման փուլ

Տեսահոլովակի դիտում և քննակում: (Watching and discussing)

Աշակերտները դիտում են տեսահոլովակ Բրիտանիայի առավել հայտնի տեսարժան վայրերի մասին, այնուհետև քննարկում տեսածը:

Սահիկաշարի դիտում: Աշակերտները դիտում են սահիկաշար Բրիտանիայի տեսարժան վայրերի մասին և փորձում են կռահել սահիկաշարում պատկերված վայրը: Այնուհետև ստուգում են, արդյոք ճիշտ են կռահել վայրը:

Աշխատանք զույգերով: Աշակերտներից մեկը ասում է որևէ տեսարժան վայրի անուն, մյուսը՝ գտնում է որևէ բառ, որն ինչ որ կերպ զուգորդվում է տվյալ վայրի հետ՝ կիրառելով «Հնգյակ» մեթոդը: Օրինակ՝

Madam Tussaud's Waxworks

Palace of Westminster Big Ben- huge bell

Piccadilly Circus - cinemas, theatres, etc.

Աշխատանք քարտերով: Աշակերտներից մեկը կարդում է քարտի վրա տրված տեսարժան վայրի նկարագրությունը, մյուսը՝ կռահում է, որ տեսարժան վայրի մասին է խոսքը:

Աշակերտները ներկայացնում են նախօրոք պատրաստած տեսարժան վայրերի նկարագրությունները, ցուցադրում պաստառներ , որոնցից լավագույնները կփակցվեն դասարանում:

Աշակերտները դիտում են տեսահոլովակ Հայաստանի մասին և քննարկում՝ համեմատելով Բրիտանիայի հետ:

Վերջին հանրձնարաևությունը կոչվում է «Էքսկուրսավարներ»: Յուրաքանչյուր խմբից ընտրվում են երկու էքսկուրսավարներ Բրիտանիայի և երկու՝ Հայաստանի շուրջ:Նրանք պետք է ներկայացնեն քաղաքները:

Կշռադատման փուլ

Դասի վերջում ամփոփում են նորությունները:

Ուսուցիչը գնահատում է աշակերտներին նախապես կազմած բանավոր գնահատման ռուբրիկով:

- լեզվի իրավիճակային օգտագործում
- լեզվի ստեղծագործական օգտագործում
- մշակութային գիտելիքների ձեռքբերում
- սահուն հաղորդակցման հմտություններ

Եզրակացություն

Այսպիսով, եկանք այն եզրահանգման, որ ուսուցման մեթոդը իրար է կապում նախապես պլանավորած նպատակը և վերջնարդյունքը: Յուրաքանչյուր ուսուցիչ դասից առաջ կանգնում է մի քանի կարևոր հարցերի առջև.

- Ինչպե՞ս հաջող պլանավորել:
- Ինչպե՞ս հաջող անցկացնել դասը:
- Ինչպե՞ս կանխատեսել արդյունքները:
- Ինչպե՞ս հասնել նպատակներին:

- Ինչպե՞ս վերլուծել հաջողություններն ու բացթողումները:

Անգլերենի դասապրոցեսում ուսուցման փոխներգործուն մեթոդները նպաստում են, որպեսզի աշակերտները բովանդակության պասիվ ընկալողներից դառնան գաղափարների ակտիվ կառուցողներ: Այն նաև հնարավորություն է տալիս աշակերտներին փոխազդելու միմյանց վրա, ինչը ավելացնում է սովորելու շարժառիթները և աշակերտների ակտիվ ներգրավվածությունը: Փոխներգործուն մեթոդների կիրառումը օգնում է աշակերտներին գնահատել սեփական ուսումնառությունը, գործի դնել անձնական նպատակները, ընտրել ամենաարդյունավետ գործողությունները և գնահատել իրենց հաջողությունները, ձևավորում ավելի ինքնուրույն անհատներ, որոնք ընդունակ են սովորել ողջ կյանքի ընթացքում, դրդում են աշակերտներին առավել հանգամանորեն մտածել նյութի մասին, իմաստային կապեր հաստատել և եզրակացություններ անել: Իսկ խմբային աշխատանքի ժամանակ ուսուցումը դարձնում է հայտնագործություններ կատարելու գործընթաց:

Գիտամեթոդական գրականության ուսումնասիրությունը, մեր կողմից պարապած դասերը և իրականացրած հետազոտական աշխատանքը թույլ են տալիս հանգելու հետևյալ եզրակացություններին.

- գիտամեթոդական գրականության մեջ փոխներգործուն մեթոդների՝ դասի տարբեր փուլերում և տարբեր բնույթի ժանրային ստեղծագործությունների ուսուցման գործընթացում կիրառելու առանձնահատկությունների վերաբերյալ ուսումնասիրությունները և մեթոդական ցուցումները կարիք ունեն գիտական ավելի ընդգրկուն վերլուծության:
- անգլերենի դասին փոխներգործուն մեթոդների նպատակային կիրաառումը՝ պայմանավորված երեխաների տարիքային առանձնահատկությամբ, նյութի բովանդակությամբ, դասի տեսակով և նյութի բովանդակությամբ, ինչպես նաև այլ հանգամանքներով, կարող է արդյունավետորեն նպաստել ուսուցման գործընթացի բարելավմանը:

Օգտագործված գրականություն

1. ՈՒսուցման արդյունավետ հնարներ /Ս. Խաչատրյան.- Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020- 74 էջ
2. Դասի կառուցվածքային տարրերի կիրառումը հանրակրթական առարկաների օրվա պլանների կազմման գործընթացում/ Հասմիկ Այվազյան, Երևան 2014
3. Օրվա դասի պլան/Ուսուցչի ուղեցույց/ Վ. Գյուլազյան, Լ. Առուշանյան, Մ. Գասպարյան
4. http://armedin.am/wp-content/uploads/2019/09/Ակտիվ-Ինտերակտիվ-ուսուցման-մեթոդներ.pdf
5. https://kznakhimnadram.blogspot.com/p/blog-page_14.html?spref=fb&m=1
6. https://www.researchgate.net/publication/332171497_GAMES_AS_EFFECTIVE_ESL_LANGUAGE
_CLASSROOM_STRATEGIES_A_PERSPECTIVE_FROM_ENGLISH_MAJOR_STUDENTS